

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՊՐՆ. Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆԻՆ

ԱՆՈՒՆ, ԱԶԳԱՆՈՒՆ ԱՏԲԱԿ ՎԱՐԿԻՐԱՅԱԶ

ՀԱՍՅԵ Գ. ՆՃԻԿԻ 17/7

ՀԵՌ. 093002366

Էլ. հասցե _____

ԴԻՄՈՒՄ

Խնդրում եմ ինձ պրաճառերով իմ
սեփական պաշտպանության հարցում, որպես
բազմազան օգրաջարիներ հաճախել:

19 Մարտ 2024 թ.

(օր, ամիս, տարի)



Դիմող
ստորագրություն

ԱՏԲԱԿ ՎԱՐԿԻՐԱՅԱԶ
անուն ազգանուն



Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի Հ Ա Ն Ր Ա Պ Ե Տ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն
Շ Ի Ր Ա Կ Ի Մ Ա Ր Ձ
Գ Յ Ո Ւ Մ Ր Ի Հ Ա Մ Ա Յ Ն Ք Ի Ա Վ Ա Գ Ա Ն Ի

3104, Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
 Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
 Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«15» մարտի 2024 թվականի N 55-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐՁԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԳԱՐԵԳԻՆ ՆԺԴԵՀԻ ՓՈՂՈՑԻ № 17/20, № 17/21 ԵՎ № 17/22 ՀԱՍՑԵՆԵՐԻ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԶԲԱՂԵՑՐԱԾ 129.69 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀԱՄԱՅՆՔԱՊԱՏԿԱՆ ՀՈՂԱՄԱՍԸ ՈՒՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Գարեգին Նժդեհի փողոց № 17/20, № 17/21 և № 17/22 հասցեների շինությունները սեփականության իրավունքով պատկանում է քաղաքացի Սմբատ Սաղաթելի Մարտիրոսյանին (հիմք՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի վճիռ՝ 07 սեպտեմբերի 2023թվական, գործ № ՇԴ3/0595/02/22):

Քաղաքացի Սմբատ Սաղաթելի Մարտիրոսյանը դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին՝ սեփականության իրավունքով իրեն պատկանող Գյումրի քաղաքի Գարեգին Նժդեհի փողոց № 17/20, № 17/21 և № 17/22 հասցեների շինությունների պահպանման ու սպասարկման համար զբաղեցրած 129.69 (մեկ հարյուր քսանինն ամբողջ վաթսուներեք հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով համայնքապատկան հողամասն ուղղակի վաճառքի միջոցով իրեն օտարելու խնդրանքով:

Նկատի ունենալով վերոգրյալը, հաշվի առնելով, որ հողամասը չի գտնվում Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողերի ցանկում, հնարավոր չէ օտարել աճուրդով, որպես առանձին գույքային միավոր, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, հողային օրենսգրքի 62-րդ հոդվածի 3-րդ մասով, 63-րդ հոդվածի 2-րդ կետով, 66-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 2-րդ մասով և հիմք ընդունելով քաղաքացի Սմբատ Սաղաթելի Մարտիրոսյանի դիմումը (մուտքագրված համայնքապետարանում 2024 թվականի հունվարի 17-ին № 846 թվագրմամբ)՝

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է.

1. Քաղաքացի Սմբատ Սաղաթելի Մարտիրոսյանին ուղղակի վաճառքի միջոցով օտարել սեփականության իրավունքով իրեն պատկանող Գյումրի քաղաքի Գարեգին Նժդեհի փողոց № 17/20, № 17/21 և № 17/22 հասցեների շինությունների պահպանման ու սպասարկման համար զբաղեցրած 129.69 (մեկ հարյուր քսանինն ամբողջ վաթսուներեք հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասը:
2. Օտարվող հողամասի ուղղակի վաճառքի գին սահմանել տվյալ հողամասի կադաստրային գնի չափով, որը հողամասի օտարման պահին կազմում է 10514 (տասը հազար հինգ հարյուր տասնչորս) Հայաստանի Հանրապետության դրամ՝ 1.0 (մեկ) քառակուսի մետրի դիմաց, ընդամենը՝ 1363560 (մեկ միլիոն երեք հարյուր վաթսուներեք հազար հինգ հարյուր վաթսու) Հայաստանի Հանրապետության դրամ:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Սմբատ Սաղաթելի Մարտիրոսյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Կողմ (24)

Դեմ (0)

Ձեռնպահ (0)

Վ.Սամսոնյան
 Գ.Մելիքյան
 Լ.Սանոյան

Մ.Սահակյան
Տ.Հովհաննիսյան
Թ.Համբարձումյան
Ն.Պողոսյան
Գ.Պասկեիչյան
Ս.Հովհաննիսյան
Հ.Ասատրյան
Ս.Խուբեսարյան
Ն.Ղազարյան
Ք.Հարությունյան
Զ.Միքայելյան
Ա.Մաթևոսյան
Ե.Խանամիրյան
Լ.Մուրադյան
Հ.Ստեփանյան
Գ.Մանուկյան
Ս.Ադամյան
Կ.Մալխասյան
Կ. Ասատրյան
Հ.Մարգարյան
Վ.Հակոբյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ
ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ԻՍԿԱԿԱՆԻՇԵՏ ՃԻՇՏ Է՝
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ

ք.Գյումրի
«15» մարտի, 2024 թվական



ԿԱՐԴԳԵՍ ՍԱՄՍՈՆՅԱՆ

ԿԱՐԵՆ ԲԱԴԱԼՅԱՆ